

ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԸ ԼՈՒՍԱՀՈԳԻ ՍՐԲԱԶԱՆՆԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Տ. Տ. Խո-
րէն Ա. Կաթողիկոսի մահէն տասն ամիսներ
յետոյ՝ տխուր ու դառնակսկիծ իրականու-
թիւն մը եղաւ Ամեն. Տ. Թորգոմ Ս. Պա-
տրիարքի անակնկալ մահը: Պատմական ու
Առաքելական երկու մեծ աթոռները այժմ
սուզի քօղով ծածկուած թափուր կը մնան:
Երկու Աթոռներն ալ Սփիւռքի հայութեան
համար ազգապահպանման կազմակերպու-
թեան և վերանորոգութեան համար ունին
իրենց հիմնական նշանակութիւնները:

* * *

Ուղղմութեամբ, մարդկային կեանքին
համար, եթեանասուն և կամ առ առաւելն
ութսուն տարիներու շրջան մը կը գծէ սա-
բառերով. «Ժամանակ ամաց մերոց անդա-
զար որպէս սարդի. և թիւ ատուրց ամաց
մերոց ի նոսա եթեանասուն ամ. ապա թէ
առաւել ևս՝ ութսուն ամ. որ ինչ աւելի
քան զայն՝ ցաւօք և հեծութեամբ»: Ան
տակաւին չէր հասած այդ սահմանին. դեռ
առնուազն 10-12 տարիներ ևս ապրելու
պէտք ունէր, ինչպէս եղած էր իր ալ փա-
կաքը: Սակայն տարիներու թիւով չէ որ
չէ անփութ կեանքը, այլ այդ կեանքի ըն-
թացքին ի յայտ բերուած արժանիքներով:

Հանգուցեալ Տ. Թորգոմ Ս. Պատրիար-
քին ունեցած շնորհներուն մէջ անշուշտ
կարեւոր տեղ մը կը գրաւէր իր վարչազի-
տութիւնը, այսինքն ժողովուրդի մը կառա-
վարելու ձիրքը: Թորգոմ Պատրիարք սա-
կայն առաւելապէս հզօր Անձնականութիւն
(Personalité) ունեցող եկեղեցական մ'եղաւ,
որ պատկառանք կ'ազդէր իր շուրջիներուն:
Օրմանեան Մրբաջըն, ալ Վեհ. և խօսքով
մէջ (երես 447) խօսելով իրմէ ձեռնադրուած
վարդապետներուն մասին, հետեւեալ կեր-
պով կը բարացուցէ Թորգոմ Պատրիարքին
նկարագիրը. «Թորգոմ ծանրագլուխ և գոր-
ծին տէր առաջնորդ մըն է, որ համակրու-
թիւն և յարգանք ալ կը վայելէ»:

Իր նկարագրին գլխաւոր գիծերը եղած
են՝ լրջութիւն, ծանրախոհութիւն, խոհե-
մութիւն, տոկուն վարչականութիւն և յա-
րատեւութիւն: Իր կեանքը մեծ մասամբ
պայքարի կեանք մը եղած է գաղափա-
րական մարդի վրայ: Իր գաղափարները,
տեսակէտները, պաշտպանելու եւ յաջող-
ցնելու համար ոգի ի բռնի աշխատած եւ
պայքարած է երկար տարիներ: Եզրիպ-
տոսի մէջ, ուր իր առաջնորդական կեան-
քին մեծ մասը անցուց, իրեն համար ե-
ղաւ մեծագոյն շրջանը իր վարչական կո-
րովի նկարագրին կազմութեան: Նշաւ խիստ՝
ուր որ պէտք էր ըլլալ, երբ այդպէս կը պա-
հանջէր Եկեղեցիին և Ազգին շահը. եղա-
ներող շատ անգամներ իր հակառակորդնե-
րուն նկատմամբ, ցոյց տալու համար թէ՛
եկեղեցական մըն էր ինքը, Աստուծոյ պաշ-
տօնեան և ժողովուրդին հայրը:

Թորգոմ Սրբազան, իբրեւ Կաթողի-
կոսական Պատուիրակ՝ Թէ՛ ի Հնդկաստան
և Թէ՛ յԵւրոպա, իր վարչական և կազմա-
կերպչական կարողութիւններով օգտակար
եղաւ եւ կազմակերպեց այդ թեմերը:
Սփիւռքի Հայութիւնը որ այժմ կ'որդայ
Թորգոմ Պատրիարքին մահը, շատ բան կը
պարտի իրեն: Լոնտոնի մէջ ինքն էր որ
յաջողացուց և կարգադրեց Արքաբեան բազ-
մակնճիւ կտակը:

Նախախնամութեան մէկ տնօրինու-
թեամբ կարծես, Թորգոմ Պատրիարք հը-
րաժեշտի իր վերջին այցելութիւնը տուաւ
Եզրիպտոս, իր նախկին թեմին, ուր 18 տա-
րիներ պաշտօնավարեց իբրեւ Առաջնորդ:
Ու Թորգոմ Պատրիարք Եզրիպտոսէն երու-
սաղէմ վերադարձին, 50 օր վերջը կը մեկ-
նի մեզմէ՝ անդարձ, իր ծրագրիներուն մեծ
մասը կ'իսակատար վիճակի մէջ ձգելով:

Ս. Երուսաղէմի արժանընտիր, մեծա-
նուն եւ պատկառելի Աթոռակալը մեծ եւ
անմահ անուն մը, ու յաւերժական յիշատակ
մը կը թողուի ի շարք յերուսաղէմի Պատ-
րիարքաց: Հանգիստ իր հողօրոյն և յարգանք
իր յիշատակին:

ՊԱՐԳԵՒ ՎՐԴ. ՎՐԹՄԱՆԵՍԵԱՆ